



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2022


Նոյեմբերի երրորդ տասնօրյակ

*Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝
մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված
տեղեկատվության հիման վրա:*

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Նոյեմբերի երրորդ տասնօրյակում օդի օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 4-5աստիճանով:



Տասնօրյակային ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել նոյեմբերի 22-23-ին և Տավուշում գրանցվել է $+19...+20^{\circ}\text{C}$, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ $+22...+23^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+17...+22^{\circ}\text{C}$, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ $+12...+14^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+17...+19^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+10...+15^{\circ}\text{C}$, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ $+12...+13^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+14...+16^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+16...+20^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+10...+15^{\circ}\text{C}$, Արմավիրում՝ $+16...+18^{\circ}\text{C}$, Արարատում՝ $+17...+19^{\circ}\text{C}$, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ $+13...+18^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $+10...+11^{\circ}\text{C}$:

Օդի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 28, 29-ին. Տավուշում գրանցվել է $-1...+2^{\circ}\text{C}$, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ $+1...+5^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $0...+1^{\circ}\text{C}$, Սիսիանում՝ -8°C , Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ $-3...-5^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $0...+1^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $-2...-6^{\circ}\text{C}$, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ $-3...-4^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $0...+2^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $0...-5^{\circ}\text{C}$ (Տաշիր՝ -8°C), Գեղարքունիքում՝ $-1...-4^{\circ}\text{C}$ (Մասրիկ՝ -7°C , Գավառ՝ -9°C), Արմավիրում՝ $-1...+1^{\circ}\text{C}$, Արարատում՝ $-1...+2^{\circ}\text{C}$, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ $0...+2^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $-4...-6^{\circ}\text{C}$:

Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում Շիրակում տեղումների գումարային քանակը կազմել է 6-9մմ (76-83%), Տավուշում՝ 1-4մմ (8-36%), Լոռիում՝ 2-4մմ (26-39%), Արագածոտնում՝ 10-20մմ (91-270%), Գեղարքունիքում՝ 2-12մմ (22-80%), Կոտայքում՝ 13-25մմ (130-167%), Արմավիրում՝ 10-11մմ (133-138%), Արարատում՝ 5-9մմ (62-132%), Վայոց ձորում՝ 14-17մմ, Սյունիքում՝ 3-9մմ (17-129%):

Նոյեմբերի 30-ի դրությամբ ձյան ծածկը Վարդենյաց լճի կազմում է 2սմ, Արագած բ/լ-ում՝ 27սմ:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում գրանցվել է -7...-12°C, Գավառում՝ -13°C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ -5...-9°C, առանձին շրջաններում՝ -2...+1°C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Օդի միջին հարաբերական խոնավությունը լեռնային և նախալեռնային շրջաններում կազմել է 78-95%, հովտային շրջաններում՝ 58-78%:

Օդի նվազագույն հարաբերական խոնավությունը լեռնային և նախալեռնային շրջաններում կազմել է 42-63%, Ամասիայում՝ 79%, Արարատյան դաշտում՝ 28-38%:

Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները



Լեռնային շրջաններում բազմամյա միջին արժեքներին մոտ աշնանացան ցորենի վեգետացիան դադարել է: Առանձին լեռնային շրջաններում (Գյումրի, Ծաղկահովիտ, Մասրիկ) աշնանացանն անցել է ձմեռման թփակալած, մնացած լեռնային շրջաններում՝ թերզարգացած վիճակում (երրորդ տերև, հանգուցային արմատներ): Հովտային շրջաններում բույսի աճ տեղի է ունենում միայն ցերեկային ժամերին, աշնանացան ցորենի վեգետացիան դեռ շարունակվում է:

Աշնանացանի բարձրությունը հովտային շրջաններում տասնօրյակի վերջին կազմել է 6-11սմ:

Մերձավանում աշնանացանի դաշտում հողի խոնավությունը 0-20սմ շերտում կազմել է 39մմ, 0-10սմ շերտում՝ 17մմ:

